ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Պաշտոնի / զբաղմունքի/ անվանումը	Ապրանքագետ
Դերը՝	Ապրանքագետն ապահովում է համապատասխան ապրանքային խմբերի շրջանառությունը արտադրությունից մինչև սպառում, հաշվի առնելով դրանց տեսականին, որակական, քանակական և գնային բնութագրերը
Խնդիրների բնագավառ 1	Արտադրության, ապրանքաշրջանառության տարբեր փուլերում ապրանքների (այդ թվում հումքի) փաստաթղթային նույնականացում, որակական գնահատում:
Աշխատանքային գործընթացը	1.Իրականացնում է ապրանքների տեսականու ընտրություն, խմբավորում ըստ դրանց համասեռ հատկանիշների, 2.Կազմակերպում է հումքի ընդունում, նույնականացում ըստ ներկայացված փաստաթղթերի, 3.Իրականացնում է հումքի որակական գնահատում, փաստաթղթային ձևակերպում և գրանցում, ստուգում է հումքի անվտանգությունը հավաստող փաստաթղթերի առկայությունը, 4.Իրականացնում է հումքի և պատրաստի ապրանքների գույքագրում, ինչպես նաև հումքի և պատրաստի արտադրանքի պահման, տեղափոխման պայմանների գնահատում և հսկում, 5.Նախապաստաստում է հումքի և պատրաստի ապրանքների իրացման գործընթացը, մասնակցելով պատրաստի արտադրանքը ուղեկցող անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպմանը, կազմում է մատակարարվող, իրացվող ապրանքների մասին հաշվետվություն և ներկայացնում է վերադասին, 6.Իրականացնում է ապրանքի որակական հատկությունների ստուգում, առանձնացնում է արատավոր ապրանքները, 7.Իրականացնում է ընդունված ապրանքների գրանցում և վաճառք, 8.Իրականացնում է ապրանքների գնահատում ըստ սպառման հատկանիշների, 9.Իրականացնում է ընդունված ապրանքների անվտանգությունը հավաստող փաստաթղթերի առկայության ստուգում, 10.Իրականացնում է ապրանքների ժամկետների ստուգում:
Կատարման չափանիշները	1.Ճիշտ է խմբավորում ապրանքները ըստ դրանց համասեռ հատկանիշների, 2.Ճիշտ է կազմակերպում հումքի ընդունումը և նույնականացումը ըստ ներկայացված փաստաթղթերի, 3.Ճիշտ է գնահատում հումքի որակը, ստուգում է անվտանգությունը հավաստող փաստաթղթերի առկայությունը, անհրաժեշտության դեպքում վերադարձնում է անորակ հումքը և կատարում է գրանցում, 4.Ճիշտ է իրականացնում հումքի և պատրաստի ապրանքների գույքագրում, ինչպես նաև հումքի և պատրաստի արտադրանքի պահման, տեղափոխման պայմանների գնահատում և հսկում, 5.Ճիշտ է նախապաստաստում է հումքի և պատրաստի ապրանքների

	իրացման գործընթացը, մասնակցելով պատրաստի արտադրանքը ուղեկցող անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպմանը, կազմում է մատակարարվող, իրացվող ապրանքների մասին հաշվետվություն և ներկայացնում է վերադասին, 6. Ճիշտ է կատարում ապրանքների որակական հատկությունների ստուգումը, առանձնացնում է արատավոր ապրանքները և գրանցում է դրանք, 7.Ճիշտ է կատարում ընդունված ապրանքների գրանցումը և վաճառքը, 8.Ճիշտ է իրականացնում ապրանքների գնահատումը ըստ սպառման հատկանիշների, 9.Ճիշտ է ստուգում գնված ապրանքների անվտանգությունը հավաստող փաստաթղթերի առկայությունը, իսկ դրանց բացա-կայության դեպքում անմիջապես տեղեկացնում է վերադասին, 10.Ճիշտ է ստուգում ապրանքների ժամկետների առկայությունը և դրանց ոչժամկետայնությունը:
Խնդիրների բնագավառ 2	Աշխատանքային օրվա նախապատրաստում և պլանավորում
Աշխատանքային գործընթացը	1.Աշխատանքային օրվա սկզբում հաշվող, ստուգող, չափման միջոցները, համակարգչային և աշխատանքային գործունեությունը ապահովող այլ սարքավորումները բերում է աշխատանքային ռեժիմի: 2.Ստանում է կազմակերպության ղեկավարության կողմից համապա-տասխան հանձնարարական անհրաժեշտ ապրանքների գնման մասին: 3. Աշխատանքային տարածքը ազատում է ավելորդ թղթերից և իրերից: 4. Իրականացնում է առևտրային կազմակերպությունում գույքագրում: 5.Իրականացնում է սննդամթերքի հետ շփվող աշխա-տակիցների նկատմամբ սանիտարական պահանջների առկայության ստուգում: 6. Աշխատանքային օրվա ավարտին իրականացնում է տվյալ օրվա կտրվածքով ապրանքների շարժի ամբողջական և ճշգրիտ արտացոլման էլեկտրոնային մուտքագրում, ամփոփ հաշվետվություն կազմում և ներկայացնում վերադասին:
Կատարման չափանիշները	1.Ճիշտ է նախապատրաստում սարքավորումները աշխատանքային ռեժի-մին անցնելու համար, 2.Ճիշտ է կատարում կազմակերպության ղեկավարության կողմից ստա-ցված համապատասխան հանձնարարականը անհրաժեշտ ապրանքների գնման վերաբերյալ, 3.Ճիշտ է նախապատրաստում աշխատատեղը հաճախորդին սպասարկելու համար, 4.Ճիշտ է կատարում գույքագրումը, բացահայտելով ավելցուկային և պակասորդային ապրանքները, ներկայացնում է առաջարկ, 5.Ճիշտ է ստուգում սննդամթերքի հետ աշխատող աշխատակիցների սանի-տարական գրքույկների առկայությունը, 6.Ճիշտ է կազմում յուրաքանչյուր աշխատանքային օրվա ավարտին տվյալ օրվա ապրանքային շարժը, մուտքագրում է էլեկտրոնային բազայում՝ սահ-մանված կարգով անմիջական վերադասին հանձնելու համար:

Խնդիրների բնագավառ 3	Ապրանքների անվտանգության, դրանց քիմիական բաղադրությամբ պայմանավորված պահման պայմանների սահմանում և ապահովում:
Աշխատանքային գործընթացը	1.Աշխատում է ապրանքների անվտանգության վերաբերյալ իրավական ակտերի և ստանդարտների հետ, 2.Իրականացնում է գնված ապրանքների անվտանգությունը հավաստող փաստաթղթերի առկայության ստուգում, 3.Տարանջատում է ապրանքները ըստ նրանց ընդհանուր քիմիական բաղադրության, 4.Մասնակցում է գնված ապրանքների պահեստավորման գործընթացին՝ դրանք խմբավորելով ըստ դրանց քիմիական բաղադրության, 5.Իրականացնում է ապրանքների ժամկետների ստուգում, 6.Իրականացնում է ապրանքների, մասնավորապես սննդամթերքի մակնշ-մանը ներկայացվող պարտադիր պահանջների առկայության ստուգում, 7.Սպառողների իրավունքների պաշտպանության շրջանակներում սպառողների հետ իրականացնում է խորհրդատվություն ապրանքների որակի, տեսականու, պահման պայմանների, մակնշման և այլ հարցերի շուրջ:
Կատարման չափանիշները	1.Ճիշտ է ներկայացնում ապրանքների անվտանգությունը սահմանող իրա-վական ակտերը և ստանդարտները, 2.Ճիշտ է կատարում համապատասխանության պարտադիր հավաստման ապրանքների համար անհրաժեշտ սերտիֆիկատների կամ հայտարա-րագրերի առկայության ստուգումը, 3.Ճիշտ կատարում է բուսական և կենդանական ծագման ապրանքների անվտանգությունը հավաստող փաստա-թղթերի առկայության ստուգումը, 4.Ճիշտ է կիրառում ապրանքների քիմիական բաղադրության իմացությու-նը, 5.Ճիշտ է կատարում ապրանքների պահման պայմանների ընտրությունը դրանց քիմիական բաղադրությունից կախված, 6.Ճիշտ է կատարում ապրանքների հայերեն պարտադիր մակնշման մեջ պարունակող պարտադիր տեղեկատվության պահանջները, 7.Ճիշտ է կատարում սպառողների իրավունքների պաշտպանությունից բխող սպառողներին պատշաճ տեղեկատվության տրամադրման գործընթացը:
Խնդիրների բնագավառ 4	Ապրանքի մրցունակության բարձրացում
Աշխատանքային գործընթացը	1.Իրականացում է նպատակային շուկայի մարքեթինգային հետա-զոտություն՝ քանակական և որակական մեթոդներով, այնուհետ վերլուծում է արդյունքները, ինչպես նաև կազմակերպության ներքին և արտաքին մի-ջավայրի վերլուծություն, 2.Շուկայի վերլուծության միջոցով մշակում է ապրանքանիշի խթանման և զարգացման ռազմավարություն՝ շուկայում ճանաչելիության բարձրացման և սպառողների կողմից ապրանքանիշի հանդեպ նախապատվության նպատակով,

	3.Մշակում է վաճառակետերում ապրանքատեսականու արդյունավետ դիրքավորման քաղաքականություն՝ սպառողի կողմից նկատելի հատվածներում տեսականու ճիշտ մատուցման համար, 4.Մշակում է մրցունակ ապրանքների՝ գնի, խթանման, վայրի և տեղափոխման (4P) ռազմավարություն:
Կատարման չափանիշները	1.Ճիշտ է վերլուծում ապրանքային շուկան և տալիս է մրցունակ ապրանքների մասին առաջարկություն, 2.Ճիշտ է գնահատում է կազմակերպության ներքին և արտաքին միջավայրը՝ ուժեղ և թույլ կողմերը, 3.Ճիշտ է մշակում ապրանքանիշի առաջխաղացման ռազմավա-ությունը, վաճառակետերում արդյունավետորեն է դասավորված տեսականին, 4.Մասնակցում է մրցունակ ապրանքների ռազմավարության իրականացմանը, ըստ գնի, խթանման, վայրի և տեղափոխման:
Պատասխանատվությունը	Ապրանքագետը պատասխանատվություն է կրում՝ Գնված ապրանքների որակի, ընդունման, տեղափոխման, պահման, իրացման՝ սահմանված կարգով իրականացման համար, Կազմակերպությունում գործող էլեկտրոնային ծրագրային համակարգում կատարված ապրանքների շարժի ամբողջական և ճշգրիտ արտացոլման համար, Աշխատանքային օրվա ավարտին ամփոփ հաշվետվության կազմման՝սահմանված կարգով անմիջական վերադասին հանձնելու համար, Սպառողներին անհրաժեշտ տեղեկատվության տրամադրելու համար, Կատարվող գործարքների վերաբերյալ փաստաթղթերի ճշգրիտ վարման և պատշաճ պահպանման համար, Աշխատանքային կարգապահության պահպանույթան համար:
Լեզուները	Հայերեն՝ գերազանց Ռուսերեն՝ բավարար Օտար լեզու՝ բավարար
Համակարգիչը	MS Office-ի, Internet Explorer-ի տիրապետում:
Գիտելիքները	Ապրանքագիտության և ապրանքների անվտանգությանը առնչվող օրենսդրական դաշտի տիրապետում, Հաշվապահական հաշվառման ներածական իմացություն, Տնտեսագիտության տեսության ներածական իմացություն, Շուկայագիտության հիմունքների իմացություն, Մարքեթինգի իմացություն, Ապրանքների համապատասխանության գնահատման մասին օրենսդրության իմացություն, Սննդամթերքի անվտանգության մասին դրույթների իմացություն, Սպառողների իրավունքների պաշտպանության մասին դրույթների իմացություն, ՀՀ Սահմանադրության հիմնական դրույթների իմացություն,

	ՀՀ քաղաքացիական և աշխատանքային օրենսգրքի ընդհանուր դրույթների իմացություն, Արտադրությունում տեխնիկական անվտանգության կանոնների իմացություն:
Կարողությունները և հմտությունները	Հաղորդակցվելու կարողություն, Խմբում աշխատելու կարողություն, Գործառնությունների փաստաթղթավորման և գրանցման կարողություն, Անհրաժեշտության դեպքում տրված հանձնարարականի պահանջները ճշգրտելու կարողություն, Կազմակերպությունում գործող համակարգչային ծրագրի օգտա-գործման կարողություն, Աշխատանքի մեծ ծավալի դեպքում արագ և հստակ իրակա-նացման կարողություն, Անհրաժեշտ իրավական և նորմատիվային փաստաթղթերը օգտագործելու հմտություն, Սպասարկման հմտություն:
Վերաբերմունքը	Կայուն հետաքրքրություն աշխատանքի նկատմամբ, գիտելիքների և կարողությունների զարգացման ձգտում, պարտա-ճանաչ,կարգապահ,հաղորդակցվող, մաքրասեր, հումորի զգացում ունեցող:

<<ԱՊՐԱՆՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՀԱՄԱՍԵՌ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԽՄԲԵՐԻ>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ <<ԱՊՐԱՆՔԱԳԵՏ>> ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Մասնագետի <<Ապրանքագետ՝ ըստ համասեռ ապրանքների խմբերի>> մասնագիտության <<Ապրանքագետ>> որակավորման շնորհման՝ մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման չափանիշները հետևյալն են՝

- ⇨ Ապրանքագետը պետք է կարողանա իրականացնել մրցունակ ապրանքների վերլուծություն,
- ⇨ Ապրանքագետը պետք է կարողանա դասակարգել ապրանքները՝ ըստ խմբերի,
- ⇨ Ապրանքագետը պետք է իմանա ապրանքների քիմիական կազմը,

- Ապրանքագետը պետք է կարողանա իրականացնել ապրանքի որակի և անվտանգության հսկողություն՝ պահպանման և պիտանելիության ժամկետների նկատմամբ,
- Ապրանքագետը պետք է սահմանի ապրանքի պահպանման, տեղափոխման և փաթեթավորման պայմաններ,
- Ապրանքագետը պետք է տիրապետի վաճառքի հմտություններին,
- Ապրանքագետը պետք է կարողանա սպառողների հետ հաստատի արդյունավետ փոխհարաբերություններ,
- Ապրանքագետը պետք է կարողանա ապահովել վաճառակետում ապրանքատեսականու արդյունավետ դիրքավորում,
- Ապրանքագետը պետք է տիրապետի աշխատատեղում սանիտարահիգիենիկ պայմանների և աշխատանքի անվտանգության պահպանման պայմաններին,
- Ապրանքագետը պետք է տիրապետի մարքեթինգային հետազոտության իրականացման մեթոդներին, արդյունքների վերլուծության և ապրանքանիշի խթանման ռազմավարության մշակման սկզբունքներին,
- Ապրանքագետը պետք է տիրապետի ապրանքաշրջանառության գործարքների հաշվառման սկզբունքներին,
- Ապրանքագետը պետք է տիրապետի համակարգչային տեխնիկային՝ ապրանքագիտական տեղեկատվության մշակման համար:
- Ապրանքագետը պետք է ունենա հաղորդակցման հմտություններ՝ բանակցություններ վարելու նպատակով: